

ոին կ'արժէ մի քանի խօսք լսել անոնց  
մասին :

Dance - երրու նման քայլերգները յղացուած են քայլերու միօրինակ rhythm տալու համար։ Այս իսկ պատճառուա միշտ  $\frac{2}{4}$  և կամ  $\frac{4}{4}$  չափով կը գրուէին։ Խնչպէս dance էն ծնունդ առած են dance form-երը, նմանապէս ալ march-երէն ծնունդ առած են marche form-երը որոնք թէ չափի և թէ ալ rhythmic տեսակէտներով march-երու կը նմանին սակայն չեն գրուիր քայլերու կըսոյթ տալու նպատակով։ Marche form-երու

(Եարեւնակելիի՝ 3)

Ղաւազոյն նմոյշներ են Schubert-ի գրած  
դաշնամուրի march-երը:

Ներկայ երաժիշտներ երքեմն կը գրեն  
կտորներ որոնց suite անունը կուտան թէ-  
պէտ սակայն բացի անունէն և ոչ մէկ նմա-  
նութիւն ունին հին suite form-երուն։ Որով  
զանազանելու համար ներկայ suite-ները  
հին suite form-էն զանոնք կը կռչենք Մո-  
դեռ րոն ֆորմ։

իրը եղբակացութիւն կարելի է ըստ  
թէ dance form-երը կը մշակեն ունկնդիր-  
ներուն rhythmic զգայութիւններու:

ՕՆՆԻԿ ՌԵՎՈՒՐՆԵԱՆ

## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՈՒԵՆ

Digitized by srujanika@gmail.com

ԽՈՐԱՅԵԼԻ ՄԷԶ

20 Մարտ Երկուշաբթի, յետմիջօրէի ժամը  
3ին, Դեր. Տեղապահ Հայրը ընկերակցութեամբ  
Հոգ. Տ. Տրդատ Վրդ. Պէտքերեանի և Ա. Աթոռոյ  
Կալուածոց քարտուղար Պր. Կ. Հինգվեանի մեկ-  
նեցաւ Խրայէլ, վանական կարգ մը հոգեւոր և  
Կալուածական գործերու կարգադրութեանց հա-  
մար: Նորին Գերապատուութիւնը հնգօրեայ այ-  
ցելաւթենէ մը ետք վերաբարձր մայրավանք 26  
Մարտ Կիրիլ, յետմիջօրէի ժամը 3ին, Թէ իր  
մեկնուումին և թէ վերապարձին մինչև ասհմանա-  
զուու Գերապատին Հօր Կ'ընկերանային Մարտին  
հայրեր, Խոկ առհմանէն անդին դիմաւորութեան  
ու ողջերթի եկած էին Խրայէլաբնակ հոգեշնորհ  
վարդապետ հայրեր և յարգելի աղջափիններ:

իպատասխան Գեր. Տեղապահ Հօր Փետր. 11-ի չնորհաւորական հեռագրին, ուղղուած ն. վեհ. Եղիպատոսի Ֆարուք Թազաւորին, իր ճննդեան տարեդարձին առթիւ, ստացուած է հետեւեալ պատասխան-հեռագրիք Արքունի Սե- նեկաատեսէն:

ԱՐՏՎՆԻ ՊԱԼԱՏ  
ԳԱՅԻՆՔ

9-krusenstern

Տեղակալ Հայոց Պատրիարքութեան

Ամ Օգոստավան Տես եւ Վեհապես՝ Նարին Վեհապեսը թագաւոր, իր ձեռնդեան արելարձին առքի, 2Եր ազնի բարեմապրուրիւններէն զայցեալ, ինձ նրամայեց լայնեկ 2Եղի եւ շերւազին ընարհակալուրիւններ :

ՄԵՐ ՍԵՆԵԿԱԴՊԵՏ

ԱՐՍՈՐԵԱՅԻ ՀՈՒՐԵՐ

• 2 Մարտ Եղ. — Երեկոյեան «Հակումը»ին  
Քարողեց Հոգ. Տ. Հայկազուն Վ. Բագ. Ալբահամեան  
«Ողջեա անհաւատութեան ելույթ աշխարհ»-

• 5 Մարտ Կիբ. — Գ. Քառամուրդաց: Ա. Տա-  
ռակին. Ս. Պատարագը Ս. Հրեշտակապետաց Ե-  
կեղեցւոյն մէջ մատոյց Հոդ. Տ. Քարեգին Արդ.  
Քազ ան ձեւան:

● 8. Մարտ Դշ. — Հանգստեան Ա. Պատարա-  
ցը հանգուցեալ Տ. Յովկաննէս Վրդ. իթմէքնեա-  
նի մատոյց Հոգ. Տ. Կորիւն Վրդ. Մանուէլեան :  
Եթ Ա. Պատարագի թաղում նորոք հանգուցեալ  
Տովկաննէս վարդապետի :

● 9 Մարտ ԵՀ. — ԵՐԵԿՈյեան «ՀԱԿՈՒՄ»ին Քարոզեց Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պողարեան «Ոչ Եկի կոչել զարդարս այլ զմեղաւորս յապաշխառութիւն» բնապահով:

• 12 Մարտ կիր. — Դ. Քառասնողաց: Տըն-  
ևսին. Ա. Պատարազը մատուցուեցաւ Ա. Յա-  
կորեանց Տաճարի Ա. Գլխազը մատրան մէջ:  
Պատարագին էր Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Ար-  
քահամեան.

• 16 Մարտ Եշ. — Երեկոյեան «Հակում»ին Քարոզեց Հոգ. Տ. Պարզե Վրդ. Վրթանէստեան Ետքի վի զի զիեանս ունիցին և առաւել ևս ունիցին» (Յաղ. Ժ. 11) բնաբանով:

• 18 Մարտ Եր. — Մրցական մասնակից Քառասինց  
Սերասինոյ. Ս. Պատարագը Ս. Գևորգի մատրան  
մէջ մատոյց Հոգ. Տ. Պարզե Վրդ. Վրթանէսեան:

— Յետմիջօրէի ժամը 2ին, դլխաւարութեամբ դեր. Տեղապահ Հօր վարդապետ հայրեր հանդիսաւոր երթով իշխան Ս. Յարութեան Տաճար, Հշրաշափառքի հանդիսաւոր մռւտքով թափօրը առաջնորդուեցաւ Ս. Գերեզման Քրիստոսի և ապա Գիւտխաչի այրն, ու հայապատկան Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին, ուր տեղի ունեցաւ երեկոյեան ժամերգութիւնը և նախատօնակ:

• 19 Ապրան կիր. — Ե. Քառասնորդաց : Պա-

**Տաւորին.** առաւտօտուն Միարան հայրեն զոյց թափառներով, առաջնը ժամը 5.30ին, դլխաւորութեամբ Հոգ. Տ. Հայկապուն Վրդ. Արքահամեանի և երկրորդը ժամը 8ին՝ զլխաւորութեամբ Գեր. Տեղապահ Հօր իշան Ս. Յարութեան Տանար, Օրուան առաւտօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյն մէջ, Ապա տեղի ունեցաւ հանդիսաւոր Ս. Պատարադ, Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ: Պատարացեց և քարոզեց Գեր. Տեղապահ Հայրը: Յետ Ս. Պատարագի կատարուեցաւ օրուան մեծահանդէս թափորը Քրիստոսի Ս. Գերեզմանին շուրջ, Նախագահութեամբ Գեր. Տեղապահ Հօր ի ներկայութեան յոզնախառն բազմութեան և Ս. Յարդմանչաց վարժաքանի երկներ պաշտերութեան, որոնք վարժաքանի Հոգ. Տեսչի մասնաւոր կարգադրութեամբ, լուցեալ մոմեր ի ձեռին բոլորուած էին զոյց շարքերով Ս. Գերեզմանին շուրջ, թափօրական անցքին երկու կողմերը: Արարողութեանց աւարտին զլխաւորութեամբ Գեր. Տեղապահ Հօր վարդապետ Հայրեր և ժողովուրդ վերադարձան մայրավանք պաշտօնական երթով:

● 24 Մարտ Ռոբ. — Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ յետ երեխյեան ժամերգութեան կատարուեցաւ վաղուան տօնին նախատօնակը Նախագահութեամբ Հոգ. Տ. Սուրեն Վրդ. Քէմ Հանեանի:

● 25 Մարտ Եր. — Մերօն Գրիգոր Լուսաւոր-

յին: Օխօսակ մասնելոյն ի վիրապն. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Ս. Գրիգոր Լուսաւորիչ խորանին վրայ, Պատարագիչն էր Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան:

Կէսօրէ վերջ, վարդապետ Հայրեր զլխաւորութեամբ Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պօղարեանի մեկնեցան Համբարձման լեռը, ուր Համբարձման սրբատեղւոյն մէջ կատարուեցաւ երեկոյեան ժամերգութիւն, «Հսկում» և յաջորդ օրուան առաւտօտեան ժամերգութիւնը: Հուօկ յետոյ Ս. Պատարագը: Պատարագիչն էր Հոգ. Տ. Միւռոն Վրդ. Կըմիկեան: Կէսօրիշերին Միարանութիւնը վերադարձաւ մայրավանք:

\* 26 Մարտ Կիր. — Զ. Բառասնորդաց: Պալլասեան. առաւտօտուն վարդապետ Հայրեր, զըլխաւորութեամբ Հոգ. Տ. Սուրեն Վրդ. Քէմհանեանի հանդիսաւոր երթույլ մեկնեցան զեպի Համբարձման լեռը: Համբարձման սրբատեղւոյն մուտքին՝ եղաւ «Ըրաշափառչի հանդիսաւոր ընդունելութիւն», որմէ ետք մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագը՝ գաւիթին մէջ յատկապէս պատրաստուած ընդարձակ վրանին տակ: Եպիսկոպոսիան խօյր ի զլուխ պատարազեց Հոգ. Տ. Սուրեն Վրդ. Քէմհանեան: Թէ երէկ և թէ այսօր զգալի էր հաւատացեալներու բազմութեան պակասը, սաստիկ հովերու և տեղատարափին պատճառաւ:



Ս. Արոնոյ Գեր. Տեղապահ Հայրը՝ որջապատուած նորընճայ Սարկաւազներով:  
Զախեն աջ՝ Վուտեապուհ Մրկ. Պապարանեան, Եղիա Մրկ. Զդշանեան, Գեորգ Մրկ.  
Զինչինեան եւ Գեղամ Մրկ. Պաբիկեան: